



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԸ. 1869 — ՔՍԱՆԵՐՈՐԻ ԵՕԹՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ. — ՅՈՒՆԻՍ

ՆՇՄԱՐՔ ԵՒ ՆՇԽԱՐՔ

Ի Հայաստան Աշխարհի.

(Տես էրես 129)

Ժ. Մեր աշխարհին ամենէն նշանաւոր դաշտաց և գաւառաց մէկն է ըսել Կարնոյ համար, ստոյգ և ծանօթ բան մ'է, մանաւանդ որ հիմայ գրեթէ մեր ամեն ուրիշ գաշտադաւառներէն աւելի շէնն է. և կ'արժէր մասնաւոր քննութեանց, թէ պատմական թէ բնական դրիցն համար. զոր ես հարեանցի յիշելով կամ նշմարելով կը թողում աւելի գիտութիւն և ժամանակ ունողներուն: Դաշտագաւառ կոչեցի, վասն զի այնչափ էր Կարնոյ սահմանն որչափ դաշտին, զոր կրնայի և դաշտ անուանել. վասն զի գրեթէ ամեն կողմէն լեռներով շրջապատած կէս կրոր դաշտի մը կը նմանի, արեւելեան հիւսիսէն դէպ յարեւմտեան հարաւ տարածուած, 35 կամ 40 մղոն երկայնութեամբ, իսկ այնքն հիւսիսէն 'ի հարաւ 20 մղոն միջին չափով. արեւմտեան հարաւային

կողմն նեղ է, և անկէ դուրս կ'ելլէ Սև ծովն, անիկա է Կարնոյ դուռն յարեւմտից, զոր կը բանայ նախայիշեալ Բռնաւ կապանն, որ անշուշտ նոյն նշանակութեամբ կոչուած կոչուողն է ընդ մէջ խաղտոյաւիճոյ և Կարնոյ, զոր վասիլ կայսր տուեր էր Դաւթի՝ Տայոց կիրաւ պալատին: Այս կողմէն սկսեալ դէպ 'ի հիւսիս երթալով և շուրջ դառնալով Կարնոյ դաշտին շրթունքը ձևացընող լեռներէն մէկ քանին յիշեմ. նախ խոչապրունարը, որուն արեւելեան թևերը դաշտիս հիւսիսային լերինքն են. այս հիւսիսային արեւմտեան ծայրն՝ Սարկամայ աղբերականց կողմերն պզտիկ դաշտ մը կը ձևանայ, և Դաշտիք (Օվաճրք) կ'անուանի, և քանի մը գեղով առանձնական վիճակ մը կը սեպուի. այս միջոցիս է Մեղրուարար կամ Մեղրարար լեռը, այսպէս կոչուած՝ լե.

րան երեսը մեղուաց բազմութեան բոյն ըլլալուն համար, ուսկից երբեմն մեզրն վտակի պէս կը կաթէ: Դաշտկայ արևելեան կողմը կը կանգնի Շեղջիկ լեռն, որ և Դեզ, իր դիզածն կամ շեղջածն ըլլալուն համար, որ և կը յայտնէ հին հրաբուլդի բաժակ մ'ըլլալ, որ հիմայ հրոյ և ջրոյ տեղ՝ ծաղկով կը ծածկուի լաւ եղանակին, սառով և քարով կ'երևի ուրիշ ատեն: Ասկէ անդին դաշտին բուն հիւսիսակողմը կը տարածուին խաչափայտու շերիք, այսպէս անուանելով ըստ աւանդութեան Ս. Խաչը այն կողմերը պահուած ըլլալու, երբ Հերակ կայսր զայն ազատելով Պարսից գերութենէն կը խաւրէր 'ի Կ. Պօլիս. գետինը պահած տեղէն բոլորած է կ'ըսեն խաչափայտ աղբիւրը՝ որ կը խառնուի ծաղկի լեռնէն իջած աղբեր հետ և կը ծնանի գեփրատ. այս ետքի յիշած լեռան և Շեղջկայ միջոց են Իշահըզ գուցէ Ըշրգը, և անուանի Տուռլի լեռն, որ նոյնպէս կրնայ դայեակ ըսուիլ նորածին եփրատայ, շատ աղբերացը համար, որոց մէջ կարծեմ ջերմուկը ալ կան: Ծաղկի լեռան մօտ է դաշտի հիւսիսային արևելեան անկիւնը Պար լեռ, որոյ կունակէն կը բղխէ Թորթումայ գետն և կ'երթայ 'ի ճորթիս և 'ի Սև ծով: Դառնալով յարևելք՝ յիշեմ Զօպան տէրէ լեռը, Երջանլըզ (օձուտ), համանուն աւերակ գիւղին քով, ուսկից հեռու չէ և Լուսաւորչի անուամբ աւերակ վանք մ'ալ. հարաւային կողմէն ալ հեռու չէ անուանի Կարմիր վանքն, Հռիփսիսիմեակց քարայրերով. — Քօթակար. Քեօշք-տաղ, Աղզը-աչըզ, որ դարձեալ հրաբոլկային բաժակ կը յիշեցնէ, Ապտիքաճմակուզի, և այլն: Քաղքէն քիչ հեռու նոյն արևելեան կողմը կան քովէ քով լեռնակներ Կոչկոչակ, Կլորգուզև կամ Հողիքուշ, Կայճակի ձոր, Ս. Նշակ, Թօփտաղի, որ հազիւ կէս ժամով հեռի է քաղաքէն. ինչպէս նաև անուանի Տէյկպօյուն լեռը, որ կարնոյ արևելեան դուն կրնայ ըսուիլ. վասն զի ասկէ կ'անցնի ճամբան Բասեն և արևելք երթալու, և

գրեթէ զուգահեռական գծի վրայ է արևմտեան դրան՝ Բունակապանի հետ: Քաղաքը դաշտին արևելեան հարաւային անկիւնն ըլլալով՝ ասկէ ետև հարաւային կը սեպուին լեռինքն Շողաշար, որ երկայն թևեր կը տարածեն. Փալաւնոքէն, իբրև թէ շատ սեպացեալ կամ զառ 'ի վեր ըլլալով՝ երբ անկէ կ'անցնին գրաստք՝ համետնին կը թափի. բայց հեռուէն լեռն ինքնին համետածն կ'երևի երկու գագաթներով, զոր կարծեմ թէ մեր նախնիք նըմանցընելով կոչէին՝ Այճու-պտկուզէք: Անկէց անդին ուրիշ լեռան մ'ալ այլազգիք նման անուն մը տուած են՝ Եկերլի, իսկ երկուքին միջոցն կայ Հիշևքեար-տաղ. իսկ անոնցմէ անդին Տուզկի լեռն համանուն գիւղին մօտ, որ գուցէ Մանանաղի գաւառին սահմանաց մօտ ըլլալով՝ անոր աղբէն ալ մասն ունէր: Ասկէց անդին դաշտին արևմտեան հարաւային կողմի լեռներն ինչուան 'ի Բունակապան և Խօչապրունար՝ չեմ յիշեր յանուանէ: — Այս լեռներն հարկաւ երկրաբանական շատ գիտելիքներ ունին, մանաւանդ որ արդէն յայտնի կը ցուցնեն հրաբոլկից նշաններ, զոր և կը հաստատեն ստէպ գետնաժաժք, որոնց անհղ նշաններն ալ դեռ աներևոյթ չէ քաղքին երեսէն: Քանի մը գիտնական Երոպացիք ըսին թէ լեռանց կազմութիւնն նաև հանքաց նշաններ կու տայ, գուցէ Արծաթի գիւղին անունն ալ անկէ ըլլայ. բայց կանոնաւոր քննութիւն մ'եղած չէ կարծեմ, և ոչ ալ փնտռուած է հանքածուխն՝ որ տեղ տեղ նշան տուած է: Այսչափով ալ յայտնի է որ պղուտոնային (հրաբոլկի) զօրութիւնը շատ ախտաւոր և ներգործեր են կարնոյ դաշտին վրայ. Պիսիգոնի (Ջրային) զօրութիւնն ալ անգործ չէ եղած հոս:

Դաշտին արևելեան ծայրէն մինչև յարևմտեանն Սև ջուրն գետն կը կիսէ՝ 'ի հիւսիս և 'ի հարաւ բաժնելով, նախ դէպ 'ի հարաւ իջնելով՝ կը լայննայ կը տարածուի գետն աւելի, լծէ պակաս երկայնածն ճահիճ կամ ջրչեղձ մը կը

ձևացրնէ, որ հին ատեն կ'ըսուէր, Ծով
 կարնոյ, նաև Շաւրք, ինչպէս հիմայ ալ
 կ'ըսուի յայլազգեաց Սազլըզ, մէջը բու-
 սած անբաւ եղեգանց համար, որ և ա-
 ւելի անբաւ ջրային թռչնոց բոյն և բնա-
 կարան են. և ինչպէս կը վկայէ մեր հին
 խորենացին ինչուան հիմայ ալ այն
 թռչնոց հաւկիթներն կարնոյ գեղացոց
 առատ կերակուր մը կ'ըլլան. անով
 տեղացիք ձեռք չեն զարներ թռչնոց,
 բայց Եւրոպացիք աւելի անխնայ են, և
 երբեմն հրացաննին կ'ուղղեն անոնց վը-
 րայ. սակայն զանոնք պակսեցրնելու
 համար թերևս ամբողջ զօրագունդ մ'ալ
 չիրաւէ. այնչափ շատ են այդ ջրային
 և ցամաքային մեծ ու պզտիկ մաշկոտն
 լայնաթաթ, բոլորկտուց, տափակտուց,
 բարձրաճին, մերկաճին, գունագոյն
 հաւերն, որոնցմէ 200 տեսակ մը համ-
 րեց ինձի անգղիացի բնագէտ մը: Կար-
 նոյ ամենէն նշանաւոր կերպարանաց
 մէկն է այս շամբս իր հաւերովն. — ան-
 նշան չէ և ջրոց առատութիւնն, գրեթէ
 ամեն մեծ տուն իր աղբիւրն ունի. —
 նշանաւոր են և Ձերմուկքն (Իլիճայի,
 Արծաթիի, և այլն): Յուրտ աղբիւրք
 հանքայինք, ինչպէս Խաչափայտին,
 Սօռզ չերմուռի ըսուածն, Այդրա կեօ-
 լիս, և այլն. — Աղի ջրերն և Աղտերն,
 որ զանազան կողմ կ'երևին: Իսկ բու-
 սաբերութեամբ՝ անանկ երկիր մը որ
 գրեթէ 6000 ոտք բարձր է ծովուն ե-
 րեսէն, և որ գոնէ տարւոյն երրորդ
 մասն ձիւնապատ կը մնայ, ուր ցուրտն
 հասարակօրէն ինչուան 25⁰ րէոմ. կ'իջ-
 նէ, պէտք է որ աղբատ ըլլայ. հովա-
 նաւոր և պտղատու ծառք չըլլան. ար-
 մրտիք ալ նուազ պիտի ըլլային ուրիշ
 բարձրաւանդակաց հետ բաղդատելով.
 Բայց իր աշխարհագրական աստիճա-
 նին շնորհքով (40⁰ լայն.) բաւական
 տաք ամառ մը կ'ունենայ քիչ ամսոց
 մէջ չափաւոր ցորեն և գարի հասցրնե-
 լու, իսկ բանջարեղէն առատ և ընտիր,
 մանաւանդ բողկաձև և կոճաձև տակ
 ունող բոյսեր: Անշուշտ աւելի բազմա-
 տեսակ և զանազան են վայրենի բոյսք
 և ծաղկունք. որոց վրայ երգ մը հանսած

է դաշտիս միջոցներն եղած Սալաճոր
 գիւղին բնիկ Դաւիթ անուամբ սարկա-
 ւագ մը երկու դար մ'առաջ, հարիւրի
 չափ կը յիշէ, և շատն հայերէն անուն-
 ներով, բայց աւելի շատն ալ թողած է,
 ինչպէս ինքնին կ'ըսէ.

Խեւ Դաւիթն եմ, շատ դատեցայ գլուխն առնեմ
 ծաղկըներուն.
 Սակաւ ծաղկունքն եմ ես գովեր. բազում մընաց
 վարպետներուն:

Յիշածներէն ոմանք, զոր ես չիկրցայ
 ստուգել, են Բարք, Խաժուակ, Պուտ,
 Պտուակ, Ծափ, Ծափծակ, Ծափկո-
 տրուկ, Հոռոմ ծաղիկ, Յինկ, Առուեղ,
 Մամսոպոպ, Լծափ, Կաթնուկ (դե-
 դին), Ծիւ, Ծրուայ, Ծիւծափ, Ծարու-
 րիկ, Թուրթ (թորթ), Մեղրիկ, Բար-
 ձուենիկ, Լեղուակ, Շրուան, Մրուան,
 Սինձ, Խոլորձ, Երիցուկ, Ճաշկի ծա-
 դիկ, Չամբիւղ ծաղիկ, Կռնկուկ, Խա-
 լիճ, Լալաղար, Հազրեվարդ, Շարշա-
 րուրիկ, և այլն, և այլն: Ծաղկունք և
 թռչունք. ասոնցմէ գեղեցիկ հրաւի-
 րակ կրնանք գտնել 'ի կարին կանչելու
 զբանասէր և զբանասէր:

ԺԱ. Կարնոյ դաշտագաւառն իր հա-
 մանուն աշխարհին կամ նահանգին մէջ
 առաջինն էր. այս աշխարհս Հայոց կ'ը-
 սուէր նաև Բարձր Հայք, երկրին բար-
 ձրութեանն համար, որուն բարձրագոյն
 մասն ալ դարձեալ այս գաւառս է. մեր
 ազգային հին պատմութեանց մէջ՝ զար-
 մանալի բան մ'է՝ որ կարնոյ և իր տե-
 րանց կամ տոհմից վրայ յիշատակ չկայ.
 Ե դարէն կը սկսի իր պայծառութիւնն,
 երբ փոքր թէոգոս կայսր շինել տուաւ
 ասոր բերդաքաղաքը, որ իր անուամբ
 կոչեցաւ, բայց յետոյ սովորական եղաւ
 կարնոյ քաղաք ըսուիլն, ինչպէս ետքը և
 հիմայ Էրզիրում կոչուիլն. այն շինու-
 թեամբն այս տեղս եղաւ Յունաց կայ-
 սերութեան ամուր մարտկոց մը ընդ-
 դէմ Պարսից, յետոյ Արաբացոց և Թուր-
 քաց. ինչպէս վերջն ալ և ինչուան հի-
 մայ նոյնպէս կը սեպուի. բերդաքաղա-
 քին հետ հարկ էր որ բոլոր գաւառն ալ
 նոր շինութիւն և աճումն առնու, և հա-
 րիւրաւոր դեղեր և մոնսուանդ աւաններ

ըլլային հոն, որոնցմէ հիմայ 120^{էն} աւելի գեղ կայ, և կէսն գեռ հին հայկական անուանին պահած են, մանաւանդ հիւսիսային կամ Սեւ ջրոյ աջ կողմինները. և հարկ է որ հին աւանդութիւններ և յիշատակարանաց նշխարներ ունենան, թէ և դրսանց չեն երեւիր մեծ շէնք կամ աւերակք. սակայն անկարելի ալ է որ ոչնչացեալ ըլլան գոնէ այն հազարաւոր եկեղեցեաց զանգուածքն, որոնցմէ կ'ըսուէր թէ 800 հատ միայն մէկ քաղաքաւանի մը մէջ կամ գոնէ իր սահմանին մէջ կային ՅԱ. դարուն կիսուն: Այս տեղս կը կոչուէր Արճն, և անշուշտ հիմակուան Գարարդ գեղն և անոր արեւմտակողմն եղած Վաղարշեր գեղն՝ կը ծածկեն այն սգալի նշխարները. գուցէ թեղսար բլուրն ալ որ Գարարդայ վրայ կը նայի՝ բան մը դիտնայ. — ասոնց դիրքէն կ'երեւի որ Արճն գրեթէ դաշտին կենդրոնը կանգնած էր, հարիւրաւոր գեղերուն մէջ. և ամբողջեան հոգը թողլով կարնոյ քաղաքին՝ ինքն հարբստութեան հնարքը և վայելքն առեր էր. Անոյ պայծառութեան ժամանակակից՝ անոր նախանձորդ մ'էր շինութեամբք և ճոխութեամբք, անկէց ալ աւելի վաճառաշահ և յղփայեալ, գուցէ և քան զբազումս թէ ոչ զամեն քաղաքս Հայոց ժամանակին. այնպէս որ իր մօտ բնակիչ պատմիչն՝ Արիստակէս, (որուն բուն հայրենի Լաւրտիվերտ գեղն գուցէ Վաղարշերի կամ Աղարշերի քով եղած ըլլայ), ականատես Արճնոյ փառքին և հարուածքին, մեծ խօսքով մը՝ զծով ու զցամաք հարկատու կ'ընէ անոր մեծութեանը. « Ծով և ցամաք երկնէր և առատանայր՝ կրել 'ի սմա » զգորութիւն իւր... և իբրև ակն մի » պատուական լուսագեղ պայծառութեամբ փայլէր 'ի մէջ ամենայն քաղաքաց. ամենեկին գեղեցիկ, բոլորովին զարդարուն »: վաճառականներն այնչափ հարուստ էին. որ թագաւորաց և իշխանաց կ'օգնէին փոխ և բնծայ տալով. — Գարարդ ալ ատենօք Հայ Ռոյալտներ ունեցեր է. — քաղաքական տէրերը հոգացողներն՝ եկեղե-

ցիներն ալ լաւ կը հոգային, « Եկեղեցեաց շինողք և զարդարիչք », կ'անուանին. քորեպիսկոպոս մը կը նստէր յԱրճն, որուն տունէն 800 լուծ եղանց կ'ելլէր, և քաղաքին աւերման ատեն 40 ուղտաբեռն գանձ վերուցին թուրքք. որոց սրոյն տակ ընկան հոն 150 վիճակաւոր քահանայք միայն: Այս ազգին աղեղնաւորքն հերարձակ էին՝ որ Պահլայ և Պուխարայի մօտ անապատներէն ասպատակելով Տուղլուփ կամ Տուղլիլ սուլթանին ետեւէն՝ եկան հոս յամի 1049, և կարնոյ քաղաքին ամբողջեան վախնալով վաղեցին Արճնի վրայ, որ հազիւ հողէ պատուարներ ունէր, շէնքերուն մէջ ալ կային փայտակերտք. թէպէտև բնակիչքն՝ 300,000, շատ կըռուեցան, դէմ կեցան, բայց հուր և սուր ասպատակայն՝ յաղթեցին. այնքան բազմութեան բնակչաց կէսն ջարդուեցաւ. ահաւոր կոտորած. արժանի Չինկիղխանի և Լէնկիթիմուրի հետեւողաց Տուղլիլի և Ալի Արսլանայ, և այնքան մեծ ու հարուստ բազմաշէն քաղաքն՝ աւրուելով, այրելով՝ հիմն 'ի վեր ընկաւ, ծածկուեցաւ, և գեռ կը ծածկէ իր սգալի կմախքը 800 տարուան սև քօղով և սև հողով, որոց տակ անշուշտ գեռ անջնջելի գեղեցկութեան և պայծառութեան մը նշաններ պահած է, և իր անցեալ կենաց դիպուածները՝ զոր ամենեկին կը լուէ պատմութիւնն, միայն այս ողբալի կատարածը յիշելով. որպէս թէ մորմոքեցուցիչ մոգութեամբ մը յանկարծ այս ծովանման դաշտիս մէջ հանած ըլլայ այս մեծաճոխ քաղաքը, « նման իմն նորահարսն կնոջ, » գեղոյն վայելչութեամբ և զարդուցն » պայծառութեամբ՝ ցանկալի գոլ աճ մենեցուն », ինչպէս կ'ըսէ պատմիչն, և յանկարծահաս հարուածով մ'ալ այսպէս խղճալի կերպով փճացուցած ըլլար զնոյն, վրան քաշելով մոռացութեան պատանքը, որոյ պատառուածքէն՝ այսքան յիշատակ մը կը տեսնեմ: Իսկ ուրիշ զգալի յիշատակարան կամ արձան մ'ալ չտեսայ հոն. բայց միայն մէկ բնակարանաց և գերեզմանաց վը-

րայ լուռ հսկող մը , խաչարձան մը .
այն ալ հեռացած ճամբուն վրայ և երես
'ի վար ընկած , զոր Յովհաննէս ոմն
ազնուական Չորտվանեկի որդի կանգ-
ներ էր քաղըին աւերածէն 40 կամ 50
տարի մ'առաջ : Չէր արժեր արդեօք
թեղսարի ճակատն ալ խաչարձան մը
կանգնել 'ի յիշատակ բիւրաւոր կոտո-
րելոցն և թաղելոց Արծնի սև աւերա-
կաց և հոլաբլրոց տակ : — Շէնք և շը-

նորհք շուտով աներևոյթ եզան յԱրծնէ .
բայց ատենօք հոն մեծ տեղ մը՝ քաղաք
մ'ըլլայն շուրացան յետագայք և տի-
րողք . վասն զի էրգիրումէն առաջ Գա-
րարզը (իբր Գարաւարզ) կարնոյ դաշ-
տին գլխաւոր շինանխտս կը նշանուէր
Օսմանեան դիւանաց մէջ . և դեռ հի-
մայ ալ կարնոյ բազմամարդ գեղերէն
մէկն է :

Կըշարունակոյի :

ՍՐԲԱԶԱՆ ՔԵՐԴՈՒԹԻՒՆ

Դ Ի Թ Ի Ր Ա Մ Բ Ե Ա Ն Տ Ա Ղ .

Ճակատն յորդ դափնեպըսակ , աստղազարդ ,
Եւ մըշտաշող յաւեժալոյսն իւր նըկատ
Անցեալ ընդ դարս և վերառեալ գըրողոյն տեռ ,
Դրրդէ զանցեալն ու յապայն սուզի վայրաբեր :
Պարզին հանդէպ արձանադիրք աշխարհի ,
Եւ զերդ հեղեղ՝ դարք ընթանան առաջի :
Ըստ կամս յընթացսն իջեալ՝ ելեալ վեր 'ի վայր ,
Գերեզմանաց ըզժամն ազդէ մահական ,
Կամ 'ի կիթառ կուսական
Երգէ յաշխարհն հին՝ զօր , զաւուրց նախահայր :

Միտ դիք , դիմէ Եհովա
Առ 'ի ծոցոյ յաւիտեանց :
Թոհ բոհն 'ի նիրհ՝ հանդէպ նորին զարթնու կայ .
Լընու զայն աջն , և զօրութեամբ գերակայ
Հանգչի յանհունն ընդ տարած :

Ասաց Աստուած , և եղև լոյս , ու աստեղց հոյլ
Լուսաւորեաց ըգըող ցայգոյն աննըշոյլ .

Անդ բնաւ տարերք այլազան
Բաժանեցան ընդ ձայնին .
Եւ շուրք յանկարծ վազս առին
Ընդ խորափոր ալս ծովուց .
Լերինք 'ի վեր կանգնեցան ,
Եւ հիւսիսին հողմք թըռեան
Ընդ լայնածիր դաշտս օդոց :